



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆՆ ՈՒ ԱՉԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ԴԱԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ**

Երեքշաբթի, 11 Նոյեմբերի երեկոյեան, Դաւթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան Նորընտիր վարչութեան անդամները այցելութիւն մը տուին Ազգային Առաջնորդարան եւ հիւրընկալուեցան Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու Ազգային Վարչութեան կողմէ: Պատուիրակութիւնը կը գլխաւորէր վարչութեան ատենապետը՝ Տիար Վահիկ Ծատուրեան:

Հիւր վարչականները, Ազգային Վարչութեան ժողովին ներկայանալով, ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ փոխանցեցին այն աշխատանքին մասին, զոր այս հաստատութիւնը կը տանի հայեցի ուսում ջամբելու համար հանրային վարժարաններ յաճախող աւելի քան հազար աշակերտներու: Անոնք բացատրեցին, որ աւելի քան երկու տասնամեակ առաջ սկիզբ առած դաստիարակչական ծրագիրը կը նպատակադրէ հայերէն լեզու, մշակոյթ, պատմութիւն եւ ընդհանրապէս հայկականութիւն ներարկել պատանի հայ աշակերտներու, որոնք այլապէս առիթ չունին հայեցի դաստիարակութեան: Աշխատանքը կը տարածուի շուրջ 20 վարժարաններու վրայ, Կլենտէյլի ու մօտակայ ավաններու մէջ: Այս գործին լծուած են շուրջ 50 հայ ուսուցիչներ ու դաստիարակներ, ինչպէս նաեւ վարչական պատասխանատուներ:

Ներկայացուցիչները շնորհակալութեան խօսք ուղղեցին Առաջնորդ Սրբազանին ու Ազգ. Վարչութեան, որոնք զօրավիգ ու աջակից են իրենց աշխատանքներուն:

Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. վարչութիւնը բարձր գնահատեցին Դաւթեան-Մարիամեան Հաստատութեան սերնդակերտ գործը ու պատրաստակամութիւն յայտնեցին կարելի միջոցներով շարունակելու գործակցութիւնը:

### **PRELATE AND EXECUTIVE COUNCIL WELCOME NEW BOARD OF DAVIDIAN & MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION**

On the evening of Tuesday, November 11<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Executive Council welcomed to the Prelacy the

newly elected board members of Davidian & Mariamian Educational Foundation. The delegation was led by Chairman Mr. Vahik Satorian.

During the meeting of the Executive Council, the new board members presented the efforts of the foundation to provide Armenian language, culture, and history instruction to the large number of Armenian students attending public schools. They stated that the work they began more than twenty years ago continues and has grown to encompass twenty schools and fifty teachers and staff members. The board members concluded their report by thanking the Prelate and council members for their constant support and encouragement.

The Prelate and Executive Council highly commended their devoted efforts and reaffirmed their continued support and collaboration.